

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվան 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

(Ստորագրողացիք դիմում են ուղղակի
Тифлисс. Редакция „Мирас“)

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Վաղի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Անդրկովկասեան մուսուլմանները: — Ներքին տեսութիւն: Նամակ Ալեքսանդրապոլից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Անգլիա: Մշակիչ հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Հայ երիտասարդութիւն:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԸ

Մինչև որ բոլոր ազգերի մէջ նշմարվում է ձգտում դէպի լուսաւորութիւն, դէպի մոաւոր առաջադիմութիւն, մեր կովկասեան մուսուլման եղբայրները, բաղկացած երկու միլիոն ազգաբնակչութիւնից, միշտ անշարժ են մնում: Նրանց մէջ չէ նշմարվում ոչ մի ցանկութիւն լուսաւորվելու, առաջ գնալու:

Միակ լուսաւոր երեւոյթ նրանց չընտանում, վերջին տարիներում, եղել է Բազուի մէջ թուրքերէն «Միլիտէ» լրագրի հիմնելը, որ դժբաղդապէս շուտով դադարեց, իսկ այժմ թիֆլիսում «Օրա» թուրքերէն լրագրի հիմնելը: Դժբաղդապէս և այս վերջին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Յիշկեական կրթութեան հետ լծողաբար տարվում է մանուկի և բարոյական կրթութիւնը, որ պայմանաւորվում է գլխաւորապէս խնամակրութեան, համբերութեան և միատուրութեան մէջ: Ամենափոքր հասակից նա գիտէ, թէ պէտք էր տէրտէրի աջը համբուրել, հասակաւոր մարդերին դուրս տալ և պառաւ տառին ու ծերունի պապին չը բարկացնել: Նա գիտէ, թէ տանը հիւր եկած ժամանակ պէտք էր սեղանի մօտ սղախաւորել, կամ ձեռքերը սրտի դրած և կանգնած սպասել հոր հրամաններին, մինչև հիւրերը ուտէին, խմէին, յետոյ նրանց ձեռքերի վրա պէտք էր ջուր անել, որ նրանք լուացվէին և այլն: Ընտանիքի մէջ ամենի առջև խնամակրութեան է նա բացի իր քոյրերից: Ծնողները գործ դրած խտրութիւնը աղջիկ դասակի և տղայ մանուկի մէջ չառն վաղ գզալ է տալիս վերջինին իր գերազանցութիւնը: Նա սկսում է բռնանալ քրոջ վրա և երբեմն ծեծել նրան: Դժբեւոյթ քրոջը, նա սովորում է ծեծել և իր կնոջը: Տղամարդի բռնակալութիւնը տկար սեռի վրա ըսկովում է երկխայտութիւնից:

Գիւղացի մանուկը խիստ փոքր հասակից անձնատուր է լինում ցնորամտութեան: Նախապաշարմունքներով և անհաստատութեամբ լի ընտանիքը ազդում է նրա մէջ ֆանտազիայի սաստիկ

լրագիրը բաժանորդների շատ անհշան թիւ ունի:

Ինչ է մեր թուրք եղբայրների դէպի լուսաւորութիւնը այդ տեսակ անտարբերութեան, այդ տեսակ անշարժութեան պատճառը:

Մեր կարծիքով գրագիտութիւնը և լուսաւորութիւնը տարածելու դժուարութիւնն է արաբական տառերի օգնութեամբ: Ինչպէս յայտնի է, պէտք է շատ տարիներ սովորել արաբական տառերը փոքր ի շատ օրինաւոր կերպով գրել և կարդալ կարողանալու համար:

Ապացոյց որ արաբական տառերը անընդունակ են գրագիտութիւնը տարածելու, այն է, որ մուսուլմանների լուսաւորված մանկն պատկանողները իրանք էլ սկսում են զգալ թէ այդ տառերը պէտք է փոփոխել: Առաջաւորված ժամանակները երեւցան փորձեր, ինչպէս պ. Շախտախանսկու փորձը, արաբական այբենարանը փոխելու:

Բայց նոր այբենարան ստեղծելը հեշտ բան չէ: Պատմութե-

նից մեզ յայտնի է որ այբենարան ստեղծողները իրանց ամբողջ կեանք էին նուիրում այդ գործին և ամբողջ կեանքը աշխատելուց յետոյ ծերութեան ժամանակ միայն վստահանում էին ընծայել իրանց ազգին իրանց նոր հնարած այբենարանը:

Կ. Պօլսի մէջ այժմ բազմաթիւ թիւրք լրագիրներ հայոց տառերով են հրատարակվում և թիւրքերից շատերը հեշտութեամբ կարգում են այդ լրագիրները:

Մենք գիտենք որ արաբական տառերը սուրբ են մուսուլմանների համար: Մենք յարգում ենք նրանց այդ զգացմունքը, ինչպէս և յարգում ենք նրանց կրօնը: Ամեն ազգ թող իր սրբութիւններն ունենայ, ամեն մարդ թող պաշտի Աստուծուն ինչպէս աւելի լաւ է համարում: Ոչ մի միջոցաւոր պէտք է աշխատի բրիտանացի մահմետական դարձնելու, ոչ էլ բրիտանացի պէտք է աշխատի մուսուլմանին բրիտանացի դարձնելու: Բայց մենք պէտք է միմեանց օգնենք լուսաւորութիւնը տարածելու և տգի-

տութեան ու խաւարի դէմ պատերազմելու:

Մինչև երբ մենք պէտք է սառնասրտութեամբ նայենք, ինչպէս մեր մուսուլման եղբայրները, որոնք բնակվում են մեր Միջրկովկասում հայերի հետ միասին, կատարեալ տգիտութեան մէջ են մնում, մինչև երբ անտարբեր կը մնանք այն տխուր երեւոյթին, որ մեր բանդերը լցվում են մեծ մասամբ մեր մահմետական եղբայրներով, աւազակութեան կամ ուրիշ յանցանքների համար: Իսկ ինչից են առաջանում թէ աւազակութիւնը և թէ այլ յանցանքները, եթէ ոչ տգիտութիւնից:

Թող արաբական տառերը սրբութիւն մնան մուսուլմանների համար, թող այդ տառերով գրվեն նրանց սուրբ գրքերը, թող այս տառերով արտայայտվի Աստուծու և մարգարէի անունը, բայց աշխարհական գործերի համար, ամենօրեայ հարցերի համար, թէ ինչպէս երեխաներին պէտք է մեծացնել, ինչպէս պէտք է հող վարել, ինչպէս պէտք է աշխատել:

զարգանալուն: Ամեն մի հասարակ երեւոյթ բացատրվում է նրան առասպելական առեղծոածներով: Երազը, կայծակը, անպի օրոտը, ցուլացող աստղը, արեգակի և Լուսնի խաւարումը, թաթառը, և մինչև անգամ կատուի մեռնելը, բոլոր կեանքի մէջ նրա համար ունեն խորհրդաւոր և գերբնական նշանակութիւններ: Պառաւ մամիկի հրաշալի հեքիաթները վառում են, բորբոքում են նրա երեւակայութիւնը շարժական գրախանութի, կաթնի աղբիւրների, խոտոյ տունիկի, եօթն գլխանի դիւլերի, վիշապների, հրկիւնների և փերիների պատմութիւններով: Ես բախտ եմ ունեցել երկու տարի մի մեծ գիւղում վարժապետ լինելու: Նորադպրութեան առաջին դասերը ես տալիս էի, որ աշակերտները և աշակերտուհիները գրէին իրանց լսած առածները և առակները, երբ մի փոքր զարգանում էին, ես գրել էի տալիս իրանց գիտցած հեքիաթները: Որքան շատ հեքիաթներ լսանում էին նրանք: Ամենահմուտ վկայասանը չէ կարող այնպէս պարզ այնպէս բնական խօսքերով շարադրել մի հեքիաթ, որպէս գրում է մանուկը: Նրա տղայ հասակին խիստ յատուկ է մարդկութեան տղայամտութեան ստեղծագործութիւնը:

Եւ զարմանալի չէ տեսնել, որ բացի կլիմայական պայմաններից, կան և ուրիշ շարժառիթներ, որոնք նպաստում են մանուկի շուտ հասունութեանը: 15—16 տարեկան հասակում նրա մէջ արդէն զարթնում են կրքերը: Սիրուն աղջիկ տեսնելիս նրա սիրտը բաբախում է, և սիրում է իր ընկերների հետ գաղտնի խօսել կնիկների վրա: Բայց ընտանեկան խիստ օրէնքները, գիւղացի կնիկների անմատչելիութիւնը դեռ ևս երկար պահում են նրա

*) Գիւղացի պէտք է չփոխել մեր դէի հետ, որ ընդունված է չար ոգու նշանակութեամբ: Գիւղ հեքիաթների մէջ պէտք է հասկանալ այն մտքով, ինչ նշանակութիւն ունի այս բառը պարսկերէզում, այսինքն՝ հոկայ, փահէլան:

նոր բորբոքվող սիրտը մանկական անմեղ ողջախոհութեան մէջ:

Կենքը ոչ բոլորովին զուրկ է մեր գիւղացի մանուկների համար հոգեկան և մտաւոր մեծացումից, որ մատակարարում է նրան ժողովրդական բանաստեղծութիւնը, որ դեռ ևս պահպանված է իր մաքուր, լուսաւորաւոր պարզութեան մէջ: Գողթանի հին երգիչներին, հայոց հին վկայասաններին, այժմ փոխարինում են աշուղները: Նա իր սաղով չըջում է գիւղից գիւղ, երգում է և վէպեր է պատմում: Գիւղերում շատ անգամ կարելի է տեսնել աշուղին, ամառնային լուսնային գիշերների պահին, հրապարակի վրա, արձակ, աստղային երկնքի տակ, սաղը ձեռքին, խորին ողբերգութեան մէջ երգում է, ածում է և պատմում է մի վէպ լի հերոսական և սիրահարական արկածներով: Գիւղացիները նրա շուրջը հաւաքված, նստել են մերկ գետնի վրա և ուշադրութեամբ լսում են սիրելի երգչին:

Գիւղական կենքում շատ բաներ նպաստում են մանուկների, որ նրանք չը լինէին անգիտ, անսիրտ, դարձաւ և զուրկ մարդկային ազնիւ կրքերից: Ամեն գիւղերում գտնվում են մի տեսակ տեղեր, որ ուրիշ խօսքով կարելի է կոչել գիւղական կրթութիւն, իսկ գիւղացիները անուանում են օղայ *) : Ողան ախուռատան մի բաժանված մասն է, որ ունի իր մէջ վառարան, յատակը ծածկված է յարգով, որի վրա սփռած են հասիրներ (փսիւթ) և որը ձմեռը խիստ տաք է լինում անասունների շնչառութիւնից և խիստ յարմար ժողովարան է գիւղացիների համար: Ամենամաքուր օղայ ունենում են գիւղի տանուտները կամ փոքր ի շատ կարողութիւն ունեցող գիւղացիները: Բայց գլխաւոր կենտրոն լինում է տանուտների օղան:

*) Օղայ՝ օսմկօրէն օթաղ կամ դրոց օթիակ բառերի նշանակութիւնն ունի:

այստեղ հաւաքվում են գիւղացիները և անց են կացնում ձմեռային երկար գիշերները: Այստեղ լինում են ամեն տեսակ խօսակցութիւններ, դատում են իրանց հասարակական գործերի վրա, պատմում են իրանց կեանքում պատահած դժբաղդանքները, կատակներ և սրախօսութիւններ են անում, առակներ և առածներ են ասում, և երբեմն գիւղական տէրերը կամ տիրացուն իրանց խելքին դռն են տալիս և սկսում են խօսել սրբերի, չրեշտակների, սատանաների, դժոխքի, արքայութեան, վերջին դատաստանի մասին այնպիսի առասպելական աւանդութիւններ, որ ոչ մէկ գրքի մէջ չէք գտնի: Վանուկ սերունդը թէ էլ չէ մասնակցում ծերունիների զրոյցներին, բայց հաւաքված նրանց շուրջը, լսում է նրանց խմաստալից խօսակցութիւնները:

Օղաները աւելի կենք են ստանում, երբ այնտեղ յայտնվում են աշուղները: Այդ կայր Հոմերոսները, որ մի ժամանակ իրանց երգերով գնացնելու էին մեր թագաւորներին և նախարարներին պալատները, այժմ զուարճացնում են գիւղացու ձմեռնային օղան: Աշուղը գիտէ հարկաւոր բերանացի վէպեր, որոնք դեռ ոչ թղթի վրա են գրվել և ոչ տպագրութեան մամուլի տակն են ճնշվել: Նրա վէպերը երգախառն են լինում, և որպէս արեւելեան բորբոքված ֆանտազիայի ծրարանք, բովանդակում են իրանց մէջ սէր և հրաշալի արկածներ: Նա միանգամ սկսած վէպը հաջիկ կարողանում է վերջանալ մի քանի գիշերվա մէջ: Գիւղացի մանուկները գտնում են աշուղ վէպերի մէջ այն կենսատու աղբիւրը, որ կազդուրում է նրանց ողին, ազնուացնում է սիրտը, և վառում է նրանց զգացմունքները մի սրբազան շնորհութեամբ: Գիւղացի մանուկը այնքան անգամ լսել է աշուղ վէպերը, որ մեծ մասը ինքն էլ գիտէ: Նա գիտէ արկածախնդիր Քորոյի արշաւանքները, գիտէ Քարամի և Ալիի սիրահարութիւնները, Աշը

ինչպէս պէտք է իր բարոյական, մտաւոր և տնտեսական դրութիւնը լաւացնել—այդ բոլորի վրա կարելի է գրել աւելի հեշտ սովորելու տառերով, օրինակ հայոց տառերով, որոնց կարելի է սովորել մի բանի ժամկէտ մէջ: Կամ ինչի չը գրել թուրքերէն, բայց հայոց տառերով այն բանի վրա թէ ինչ է պատահում Լաւոյայում և այսպիսով ծանօթացնել մոտավորապէս եւրոպական կեանքի հետ, ինչպէս այդ անում են Կ Պօլսի «Մանգուլի Լեֆթեր» կամ «Մէ-ճմուայի Հաւատի» լրագիրները: Թո՛ղ հաւատան մեզ մեր թուրք եղբայրները, մենք նրանց հետ խառն ապրելով, միշտ եղել ենք և միշտ կը մնանք նրանց բարեկամներ: Մեր նպատակները մի են, մեր շահերը համանման են: Մենք նրանց դժբաղդութիւն, նրանց կորուստ չենք ցանկանում, այլ ամբողջ սրտից բարի ենք ցանկանում նրանց:

Մենք մի բան ենք ցանկանում միայն, այն է օգնել մեր մոտակի ման եղբայրներին մեր կարողութեան չափ մօտեցնել լուսաւորութիւնը նրանց ժողովրդի մէջ և ոչնչացնել տգիտութիւնը, որ միշտ եղել է ամեն մարդու, ամեն ազգի ամենամեծ թշնամին: Մենք ամբողջ սրտից կը ցանկանայինք որ թուրքերի մայրենի, ազգային լեզուն զարգանար և ծաղկէր թէ նրանց դպրոցներում և թէ նրանց գրականութեան ու լրագրութեան մէջ:

Ղարիբ և Շահանամի վաղված սէրը, Լէյլի և Մաշուկի անձնագործութիւնները, Շահ Սմայիլի քաղաքագործութիւնները, Ֆարսադի անբախտ սերը, —նարիւրաւոր այսպիսի օգոսաններ զիտէ նա: Այժմ մենք աշխարհի երգերը մի բերանացի հաւաքածով են կրթելու է իր վերջում հնդկական անտունը և այս պատճառով ամեն մի երգ զանազանում է իր բնաւորութեամբ: մի մասը քնարերգութիւն (լիրիկա) է, մի մասը փիլիսոփայական և բնութագրական, հեղինական, ծաղրական երգերը կրում են իրանց մէջ թէ և կոչող, բայց խիստ կենդանի սրամտութիւններ, թէ որպէս կծել և կատակել գիտէ արեւելքը—Այս բոլորը ազգում են մանուկների սրտի վրա և թողնում են նրանց մէջ անհնազանդ տպաւորութիւններ: Այլը աւելի մեծ պայտօն է կատարում ժողովրդի ստոր դասի կրթութեան, մտաւոր և բարոյական ուղղութեան մէջ, քան թէ տէրտէրը, որի չոր ու ցամաք քաղաքները միայն սառնում են, բարացնում են սրտերը: Զարմանալի է, թէ սրբալի եռանդով մեր գիւղացիները աշխատում են, որ իրանց զաւակները ուսում ստանային: Մի անբաղատելի զօրութիւն մղում է նրանց դէպի այդ ցանկութիւնը: Մեզ մօտ գիւղ չէ՞ր գտնի, որ եկեղեցուն կից մի փոքրիկ դպրոց չունենար, և ուր որ այդ չը կար, մանուկները հաւաքվում են գիւղի քահանայի կամ տիրացուի մօտ: Տարակա երեք եղանակներով,—գաղութը, ամառը և աշունը,—մանուկները զբաղված են լինում գիւղատնտեսական գործերով, թափառելի չեն գտնի, որ ինչպէս և մի ժամանակ չեն գտնում դպրոց գնալու, իսկ ձմեռը նրանք աւելի ազատ են տնտեսական հոգսերից և սկսում են սովորել: Բայց կան այնպիսի գիւղեր, որոնց թիւը սակաւ է, որ ունեն կանոնաւոր դպրոցներ, որոնց մէջ մանուկները սովորում են ամբողջ տարին, բացի ամառային երկու տաք ամիսներից: Մեր գիւղացիները, մանաւանդ վերջին տասն տարվայ ընթացքում, այն աստիճան հասկացել են ուսման կարեւորութիւնը, որ ամեն զօրեղութիւն յանձն են առնում, որ որքան կարելի է, իրանց դպրոցները կանոնաւոր վիճակի մէջ դնեն: Շատերը, որոնց նիւթական դրութիւնը ներքին է, չեն բաւականանում գիւղական դպրոցներով և ուղարկում են իրանց զաւակներին Ս. Պետերբուրգ քաղաքները, կամ Ռիֆթի, Մոսկւայ, Ս. Պետերբուրգ և մինչև անգամ արտասահման, բարձր, համալսարանական կրթութիւն ստանալու: Եւ մեր գիւղացիներից կարելի է տեսնել բազմաթիւ բժիշկներ, իրաւաբաններ, տնտեսագէտներ, գիտութեան ամեն մէկ ճիւղի մէջ աւարտածներ, և մինչև անգամ պրոֆէսորներ, և բարձրատիւժան եկեղեցականներ: Առհասարակ խօսելով, պէտք է ասած, որ մեր գիւղացին բոլորովին ազատ է այն նախապաշարմունքից, թէ որդին պէտք է լինէր հօր կեանքի շարունակութիւնը, և բնաւ չը պիտի չեղէր այն ճանապարհից, որով ապրել էին նրա պապերը: Նա, կարծես, բնազդովով զգում է իր վիճակի տաճարութիւնը և ցանկանում է որդու համար մի աւելի լաւ վիճակ: Այդ վիճակը նրա կարծիքով կարելի է գտնել միմիայն ուսման և կրթութեան մէջ: Վերջին ազգային անգամ այսպէս է մտածում: Ինչ շատ է պատահել, երբ ցանկացել են գիւղացի մանուկներից սպասաւոր վարձել, տեսնում են, մի հեռու և անցայտ գիւղից հայրը բերում է իր որդին, երբ հարցնում են, թէ որքան պէտք էր վճարել, նա պատասխանում է՝ «ազալ», ոչինչ չեմ ուզում, թող ձրի ծառայէ, և միայն դուք սովորեցնե՛ք որդուս գրել և կարդալ: Խօսելով առհասարակ գիւղական մանուկների

Իսկ արաբական տառերով այդ անկարելի է անել, որովհետեւ արաբական տառերը շատ դժուար են սովորելու համար:

Բայց թո՛ղ փորձեն մօտեցնել իրանց լրագրութեան մէջ հայոց տառերը, — և կը տեսնեն որ չեն անցկենայ մէկ հինգ վեց տարի և լուսաւորութիւնը աւելի շուտ կը տարածվի մոտակի մանուկների մէջ այդ հինգ վեց տարվայ ընթացքում: քան թէ մինչև այժմ դարերով կարողացաւ տարածվել:

Ուրեմն մոռանանք որ և է պատահական թշնամութիւն մեր մէջ: Լնդրկովկասի թուրքը և հայը իսկապէս միշտ բարեկամ պէտք է լինեն իրանց մէջ:

Ուրեմն եղբայրաբար մեկնելով միմեանց մեր ձեռքը, օգնենք միմեանց ժողովրդի մէջ լուսաւորութիւնը տարածելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

28 հոկտեմբերի

Անդրկովկասի հայաբնակ քաղաքներից մէկը Ալեքսանդրապոլ լինելով, ունի և իր մէջ մօտ 52 գերդաստան հայ-կաթոլիկներ, որոնք, ինչպէս յայտնի է, զաղթականներ են մասամբ Ռուսիայից, մասամբ Ալեքսանդրապոլի գաւառի զանազան գիւղերից: Գաղթելու առաջին մասի մէջ ունեն կառուցված մի եկեղեցի և մէկ ուսումնարան: Եկեղեցին շինված է 1850 թվին հռոմէական ճաշակով և թէ զրոյց և թէ ներսից զուրկ է ամեն շքեղութենէ: Եկեղեցու աջ կողմը շինված է ուսումնարանը, հինգ առանձին սենեակներից բաղ-

կացած, բաւական վայելուչ և յարմար ձևով, որտեղ ուսանում են տիրացուներ և երեխայք: Տիրացուները ժողովվում են Անդրկովկասի զանազան քաղաքներից և գիւղերից, որոնք մի քանի տարի ուսանելուց յետոյ արժանանում են սարկաւազութեան և ապա ընդունում են քահանայութիւն Սարատովի վիճակաւոր հռոմէական եպիսկոպոսից:

Ուսումնարանը բաժանվում է հինգ առանձին սենեակների, որոնք են՝ 1) նախասենեակ, 2) տը-լայոց ուսումնարան, 3) մեծ դահլիճ տիրացուների համար, որտեղ կարգով շարված են դրանդաններ և գրքեր, 4) ննջարան, և 5) խօսարան:

Պատերին կպցրած են զանազան լեզուներով աշխարհագրական, փոստային և հեռագրական քարտէշներ, նաև սրբազան պատմութեան վերաբերյալ մօտ 240 պատկերներ, որոնք միայն զարդի կամ ձևի համար են ծառայում և ոչ իրանց նշանակութեամբ: Ուսումնի աւանդում է հայր Ա. Վ. Արարատեանը հին նախապետական մէթոդով, աւանդելի առարկաները սրանք են՝ հայոց լեզու, ռուսաց լեզու, քերականութիւն, սրբազան պատմութիւն և աստուածաբանութիւն: Իսկ ազգային դաստիարակութիւն և աշխարհագրութիւն բնաւ չեն աւանդվում: Երեւոյցութիւնը աւանդաբար են սովորում և ոչ ձայնագրութեամբ:

Ճշմարտութիւնը չը թաղցնելու համար պէտք է խոստովանվի որ միջանում հայկական գրականութիւնը և եկեղեցու ժամասացութիւնը, չնորսով յիշել Ա. Վ. Արարատեանի է պահպանվել, քանի որ մեր գաւառի մի քանի գիւղերը ընդունել են լատինական ժամասացութիւնը, փոխանակ պաշտպանելու և յարգելու իրանց մայրենի լեզուով կատարվող ժամասացութիւնը: Գուցէ նոյն իսկ մեր տիրացուներն իրանք ընդունակ չեն այդ ուսմունքը սովորելու, վասն զի նրանք մանկութենից չեն ուսանում որ և է դպրոցում, այլ իրանց գիւղի կամ քաղաքի տէրտէրների մօտ են պատրաստվում: Երբ լինում են 20—25 տարեկան, այն ժամանակ են ընդունվում յիշեալ ուսումնարանում: Իսկ ինչ կը վերաբերի հասարակ ժողովրդին, նա բացի իր տէրտէրներից և տիրացուներից չունի ուրիշ ուսուցիչներ, վասն զի մեզանում այսպիսի ուսուցիչներ չեն ընդունվում:

Այդպիսի ուսուցիչներ ունենալով, ի հարկէ հասարակութիւնը պիտի կապված է մնում իր բարեւարներին քանի որ նրանք ուսուցանում են կրօնի խոստովանութիւնը մի կողմից, և ուրիշ կողմից սառնասրտութիւնը դէպի աշխարհական եղբայրները: Բայց նրանցից չէ կարելի պահանջել ազնիւ զգացմունքներ, քանի որ նրանք չեն ճանաչում և չեն սիրում ազգութեան զաղափարը:

Այդ տեսակ ուսուցիչների ձեռքով կրթված հասարակութիւնը ինչ կարելի է սպասել... ատելու-

կրթութեան վրա, եւ ստիպված են փոքր ինչ չեղել իմ հետազոտութեան նպատակից և ցոյց տալ, թէ ինչ են դուրս բերում մանուկները գիւղական բաղձաթիւ դպրոցներից: Եթէ ընդունում ենք, թէ ուսումը և կրթութիւնը պէտք է համապատասխանէ իւրաքանչիւր դասի իրական պահանջներին, և պէտք է լրացնէ այն, ինչ որ պակաս դպրոցները բոլորովին ապարդիւն և միջակ անգամ վիճաբար կը գտնեն: Գիւղացին գործ ունի հողի և անասունների հետ: Արդեօք դպրոցը տալիս է նրա որդուն փոքր ինչ տեղեկութիւն, թէ որպէս պէտք էր խնամել անասուններին, որ նրանք աճէին, բազմանային, և աղւուղացէին իրանց ցեղը: Արդեօք դպրոցը ծանոթացնում է նրա որդուն հողի օրգիւտութեան հետ և բոյսերի մշակելու պայմանների հետ: Գրանցից ոչ մէկը չէ անում դպրոցը: Նա սովորեցնում է մանուկներին գրել, կարդալ, հաշուել, կրօն և այլն, որոնց մէջ մեծ պէտք չունի գիւղացու զաւակը: Այլուրեքը սոված փորին հաց չէ տալիս: Ինչքան լըտ ինքեան հասկանալի է, որ իմ խօսքը կանոնաւոր գիւղատնտեսական դպրոցներին մասին չէ, որ շատ ցանկալի էր, եթէ մի խումը գիւղերի կենտրոնում գտնէ մի հատ գտնվել,— և խօսում են գիւղատնտեսական բոլորովին մասնաւոր և տարրական հմտութիւնների մասին, որ ամենահասարակ վարժագետը կարող էր քաղել զանազան գրքերից և հաղորդել իր աշակերտներին: Գուցէ ինչ կը նկատեն, թէ մերն այսպիսի վարժագետներ չունենք: Մենք իսկապէս ոչ մի առարկայի համար պատրաստված գիւղական վարժագետներ չունենք: Նրանք իրանք իրանց պատրաստում են, իսկ եթէ կը պահանջվի նրանցից, կարող են սովորել և շատ բան գիւղատնտեսութեան մասին: Այն և պէտք է ի նկատի ունենալ, որ մեր գիւղական վճարում են վարժագետին աւելի շատ, քան

թիւն դէպի աշխարհական եղբայրները, ուրիշ ոչինչ: Այդ է պատճառը որ մեր կրօնականները անկիրթ են և կրօնական վէճերի սիրող...

Իմ կարծիքով այդպիսի տգիտութեան պատճառն այն է, որ մեր ուսումնարանում չեն աւանդում ազգային պատմութիւն, որ ամեն ազգերի մէջ ամենաանհրաժեշտ և կարեւոր առարկայ է, և աւանդվում է ամեն ազգային դպրոցում, չը նայելով թէ ինչ դաւանութեան են պատկանում մանուկները: Երկրորդ պատճառը կարելի է այն լինի, որ մեր ուսումնարանում չեն ընդունվում հայ-լուսաւորական երեխաներ և նոյնպէս մեր կաթոլիկ մանուկները չեն գնում հայ լուսաւորական հոգեւոր դպրոցները:

Պէտք է խոստովանվի որ մեզանում դեռ չեն հասկացել կրօնի և ազգութեան որոշ լինելը: Թէ ով պէտք է յարուցանէ մեր երեխայի մէջ այդ ազնիւ զաղափարը—դա ինքն իրան հասկանալի է: Այդ մօր պարտաւորութիւնն է: Եւ իրօք, մայրը սովորեցնում է երեխային հեռու կենալ միւս եղբայրներից (քանզի կրօնով տարբեր են): Երեխան մեծանում է, և իր սրտի մէջ աճում են մօր բերանով ներշնչած ատելութեան ոգու սերմերը դէպի իր աշխարհան, թէ և համարեն եղբայրները: Պատանին դառնում է երիտասարդ, ամուսնանում է, ինքն էլ որդիք է ունենում,— և իր որդոյն էլ նոյն ոգի և նոյն ուղղութիւն է տալիս... Նա թէ և այդ ազգային է պատկանում, բայց նա ատում է իր ազգութիւնը, նրան չեն հետաքրքրում ազգութեան պահանջները, վասն զի նա կարծում է թէ ինքն Հռոմէական է պատկանում: Նա չէ սովորած ազգային պատմութիւնը, չէ լսած իր տէր-տէրից ազգութեան և կրօնի միմեանցից շուկ վրենելը:

Մենք ներկայումս բազմաւոր ենք համարում մեզ, որ ունենք ամեն մի գիւղում ոչ աւել քան 2, 3 քահանայ... և ահա մօտ 14 ուրախակիր սարկաւազներ կան պատրաստ, որոնք պէտք է ևս արժանանան քահանայութեան: Բայց եթէ մէկը այդ քան քահանաներ,—մենք պատասխան չենք ունենայ տալու... Եթէ դրանք հասարակութեան համար են պատրաստվում, արդեօք ինչի համար չեն բարեհաճել և հասարակաց բարոյական կարիքը լցնելու: Կամ թէ միայն ձևի համար են, և ինչի՞ աշխարհ շատ են...

Վերջապէս ինչպիսի ենք մեր հոգեւորականութեանը որ բարեհաճի մեր ուսումնարանում աւանդել տալ այն ամենակարեւոր ուսմունքները, ինչպէս հայոց աշխարհագրութիւնը և հայոց պատմութիւնը, որոնք ներկայումս ամենաանհրաժեշտ ուսմունքներն են և յարմար են ժամանակի պահանջներին և ընդհանուր ուսման հարկաւորութեանը, վասն զի սկսում ենք զգալ ազգային սիրոյ

թէ մի վարժագետ ստանում է, օրինակ, Գերմանիայի մի գիւղում: Ուրեմն կարելի է լաւ ընտրութիւն անել ուսուցիչների մէջ:

Այլ է, եթէ գիւղական դպրոցները այն աստիճան զարգացնեն մանուկներին, որ նրանք աւարտելուց յետոյ կարողանային ամեն գրքեր կարդալ, հասկանալ, կարողանային ինքնակրթութեամբ իրանց տնտեսութեան վերաբերութեամբ հմտութիւններ ստանալ: Այդ անել անկարող են նրանք, որովհետեւ դպրոցներից խիստ փոքր գիտութիւն են դուրս բերում: Բայց այդ փոքր գիտութիւնը աւելի խանգարում է նրանք օրինաւոր գիւղացիներ լինել, քան թէ նպաստում է: Կրթականաւոր լինելի կրթութիւնը միշտ հպարտացնում է ուսանողներին: Մանուկները մի բան սովորելով, լաւ և է ասել ոչինչ չը սովորելով, սկսում են այնուհետեւ արհամարհանելու նայել իրանց ծնողների պարագմունքի վրա, նրանք դառնում են մի տեսակ թշուառ արարածներ, որ կորցնում են իրանց հակումը դէպի ծնողների ապրումաւոր աւանդական եղանակը, և մի նոր ձև, մի նոր եղանակ էլ չեն սովորում, և այսպէսով մնում են աւարտած, այսինքն մոլորված,— ոչ այս և ոչ այն: Գիւղը սկսում է անտանել լինել նրանց, և միակ ելքը, որ գտնում են իրանց դժուար դրութիւնից դուրս գալու համար այն է, որ դիմում են դէպի օտար երկրները նոր ապրումաւոր գտնելու: Ահա ինչով է բացատրվում գիւղացի մանուկների աստիճան գաղթականութիւնը դէպի քաղաքները:

Այս դէպքում մեծ ազդեցութիւն է գործում օրինակը: Այս ինչ գիւղացու որդին, ուսում ստանալով, դարձաւ աստիճանաւոր, բժիշկ, վարժագետ, բարձրատիւժան եկեղեցական, կամ հարուստ վաճառական,—միւսները աշխատում են, որ իրանք էլ մի և նոյն բախտաւորութեանը հասնեն: Այստեղից առաջ է դալին գիւղացի մանուկների սաստիկ հոսանքը դէպի մերձաւոր և հեռաւոր քա-

կարևորութիւնն և եղբայրական ասելութեան հա-
րուածելու անհրաժեշտութիւնը:

Նմանապէս հրաւիրում եմ տեղիս հայ-կաթողիկ-
ներին ուշադրութիւնը այն գործերի վրա, որոնցով
կարելի է միայն առաջադիմութիւն անել: Կողմը
գնենք տգիտական խորհուրդները և մեզ համար
անհատական իրօնական վէճերը, հետաքրքրվե՛ք
միմիայն ազգային գործերով, օգնենք նրանց մեր
կարողութեան չափ: Եթէ ոչ, մենք իրաւամբ չենք
կարող ազգութիւնն անհրաժեշտ կոչել:

Վերջացնելով այդ նամակս, խնդրում եմ, պ-
խաբազիր, բարեհաճե՛ք տպել նրան ձեր ազգո-
գուտ լրագրի մէջ:

Հայ-Հռոմէական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԵՂՐԻ գիւղացի մեզ հաղորդում են, որ անցա-
գիր շունեցող մի հայ եկել է այդ գիւղը
և պատկեր է մի պրի կնոջ աղկալ հետ: Նա
գիւղում պարտքով փող է վերցրել և այդ փողերը
ծախսելուց յետոյ, ուղեորովում է Պարսկաս-
տան, հաւատացնելով, որ գնում է անցագիր բե-
րելու: Այդ մարդու հետ գնացողները Գալիսթում
տեղեկանում են, որ նա պատկեր է մի քանի կա-
նանց հետ, զանազան գիւղերում և քաղաքներում:

Մեզ գրում են ՄԵՂՐԻ գիւղացի. «Մեղրի գե-
տակը թափվող վառակները մեր եղբայրները գտնե-
լուք է վաճառ անում: Նա գիւղում է գիւղացիներ-
ին երկուսը մի քաղաքի օսկականութեան մա-
սին վէճ ունէին: Օրերումս վիճողները մէկը
փայտով խփել է միւսին գլխին և տեսնելով որ
նա դեռ մեռած չէ, խանջալով սպանել է և իր
եղբոր հետ փախել է գիւղից: Գիւղի տանուտէրը
կալանաւորեց յանցանքներին կողմնակիցներին:
Միւս օրը յանցաւորը ինքը ներկայացաւ տանու-
տէրին, որը կալանաւորեց և անցքի մասին տե-
ղեկութիւն տուցե՛ք զաւառագետի օգնականին»:

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ վերջին ե-
րեք տարիները տեղական գինիները պղտորվում
են, սեանում և անպիտան դառնում մինչև անգամ
քաղաքի համար: Նրանում կարողանում են լաւ
գինիներ պատրաստել միայն մի ֆրանսիացի և մի
տեղացի պարոն: Այս վերջինը գինեգործութեան
հարցին վերաբերելով մի գիրք է ձեռք բե-
րել, որին հետևում է գինի պատրաստելու ժա-

մանակ: Թղթակցը խնդրում է այն անձինքներին,
որոնք ծանօթ են գինեգործութեան հետ, մի յօդ-
ված նուիրել այդ հարցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ

Վերջին ժամանակներս Անգլիայում յաճախ
կրկնվող միտինգներն ամենքի ուշադրութեան
առարկայ են դարձել: Դեռ շատ ժամանակ
չէ Մանչեստրում մի այդպիսի միտինգի մէջ
լորդ Սէլիսթրի-ի մի երկար ծառ խօսեց, որի
մէջ նա թշնամական անհարկութիւններ էր
անում Ռուսաստանին: Մանչեստրի միտինգից
յետոյ, դրանք սովորական բան դարձան:

Այսպիսի մի միտինգ էլ տեղի ունեցաւ
Դէլիում, որ այդ քաղաքի բնորոշների ժողո-
ւում պարզամէտի անգամ պ- Կնատչիւրը—
Հիւսթսնի մի ընդարձակ ծառ խօսեց: Ծառի
մէջ նա աշխատեց Հերբերտ լորդ Սէլիսթրի-ի
Մանչեստրում յայտնած վերջին մտքերը: Սխալ
է, ասած հոգեւորը, որ ներկայ կառավարու-
թեան քաղաքականութիւնը ձգտում է կա-
պել անգլիական անուան հետ նրա անցեալ
փառքը: Բրիտանական թագուհու մինիստրը-
ներն իրանց անտախտ վարմունքով և թիւրքե-
րին զրգուելով Ռուսաստանի դէմ, այս օրուան
օրս անգլիացոց ազգը ատելի դարձրին թիւր-
քերին: Իսկ ինչ կը վերաբերի Անգլիայի տանի
գործին, պ- Կնատչիւրը—Հիւսթսնի, իրան ասե-
լով բնաւ ոչինչ չէ հասկանում, և խոր
համոզված է որ ամենքն էլ նրա պէս ոչինչ չեն
հասկանում Սէլիսթրի-ի գիտական սահման
ստեղծել: Խօսքից: Պարոն հոգեւորը շարունա-
կելով իր յարձակողական ծառը, ասում է.
«Հարաւային Անգլիայում մենք մի մեծածախս
պատերազմ սկսեցինք, որը մեզ ահապէս գու-
մարներ նստեց, բայց որից մենք բնաւ հա-
ւասարակութիւն օգուտ չը ստացանք: Մեզ յաջո-
ղեց մի քանի հազար անմեղ լեռնական-
ներ բրիտանական երկաթին զոհ չինել: Մենք
անարդար պատերազմի յաղթութեամբ շուքած
կարծում ենք թէ վառաւորում ենք մեր ա-
նունը, մինչդեռ անաչառ պատմութեան ա-
ռաջ մենք նսեմացնում ենք մեր փառքը:

Նամ ասածներն ասելի արդարացիելու հա-
մար, ինձ քաղցր է յիշել այն խօսքերը, որ

Եւրոպական մամուլը ամենայն արդարութեամբ
տուել է մեր պատերազմին. «Բրիտանական յաղ-
թեց, բայց փառքի պատիւ ստացաւ մի վայ-
րենի անյայտ ցեղ»:

Նիթէ մեր յաղթութեանց յետոյ էլ մենք
մրոտած ենք դուրս գալի պատերազմի բե-
մից, ուրեմն մենք լոկ բարոյական օգուտ էլ
չը կարողացանք դուրս բերել պատերազմի բե-
մից:

«Նա այս բոլոր ներկայացումները մեզ տալիս
է մեր կառավարութիւնը. մենք համարձա-
կում ենք բոլոր այս չարքների պատասխա-
նատուութիւնը մեր կառավարութեան վրա
գցել»:

Պատուելի հոգեւորն իր ծառը վերջացրեց
բացականչելով:

«Ապրենք խաղաղասիրութեան, մարդասիրու-
թեան, եղբայրութեան, ազատութեան,
արդարութեան վեհ զաղափարներով: Ինչեք
արժանի զաւակներ Բրիտանիայի, արբարու-
թեան դարձ ձիւղերից հիւսնե՛ք նրա դափ-
նին» (Անգլիայի ծախահարութիւններ):

Մի ուրիշ ժողովում էլ պ- Կնատչիւրը աստիկ
յարձակեց իր ընտրողների առաջ կառավա-
րութեան բռնած այլանդակ քաղաքական ըն-
թացքի վրա:

Ձը նայելով այսքան յարձակմունքներին, այ-
նու ամենայնիւ առ այժմս դեռ դաւանա-
պէս ոչինչ չէ կարելի ասել, թէ ինչ ձև կը
ստանայ քաղաքականութիւնը, եթէ մինչև
անգամ նոր ընտրութիւնները բոլորովին ուրիշ
պետական անձինքներ յառաջ բերեն:

ՄԵՂԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

10.10.09, 1/12 նոյեմբերի: Մաղապից Հե-
ռագրում են, որ ծովապետ Հօրնի նաւատոր-
մին հրաման է տուել, որ պատրաստ լինի
4 օրվայ մէջ դէպի Արեւելք նաւելու:

ՎԻԵՆԱ, 1/12 նոյեմբերի: Կայսերադն Թա-
գաթաւանդը վաղը դուրս կը գնայ Վիեննա-
յից:

Կ. ՊՈԼԻՍ, 1/12 նոյեմբերի: Բ. Դուռը
անգլիական նաւատորմի նաւելու մասին ըս-
տացած հրամանի վերաբերութեամբ բացա-
րութիւն պահանջեց: Կայսրի Հետ ունե-
ցած տեսակցութեան ժամանակ, սուլթանը

յայտնեց, որ Բ. Դուռը առաջարկեց նրան
անյապաղ մտնել վերանորոգութիւնները, բայց
նկատեց, որ նրա Հեղեմակութիւնը կը
թուլանար, եթէ ուրիշներ կարծէին, որ նա
Անգլիայի ճշման տակ է գործում:

10.10.09, 2/13 նոյեմբերի: «Times» լրագիրը
խօսելով բրիտանական նաւատորմի թիւրքաց
ծովերն ուղարկելու մասին, այն կարծիքն է
յայտնում, որ կառավարութեան այս ընթաց-
քը համակրութիւն կը գանի երկրի մէջ: Մի
և նոյն լրագիրը անկարելի չէ համարում, որ
վերանորոգութիւնների իրագործման մասին
թիւրքաց պետական նշանաւոր մարդիկ աւե-
լի նախադաս կը համարեն Ռուսաստանի
դաշնակցութիւնը. բայց Ռուսաստանն առ
այժմ պէտք չէր այսպիսի խնդիրների հե-
թարկելը. բայց եթէ բանն այդպէս է, այն
ժամանակ Անգլիան պարտական է հրաժար-
վել բոլոր այն խոստումներից, որ նա արել է
Թիւրքիային:

10.10.09, 3/14 նոյեմբերի: Թէհրանից հա-
ղորդում են, որ Կարուշի անգլիական զեպա-
նատան կոտորածի լուրը մեծ ուրախութիւն
պատճառեց Հեթաթի բնակիչներին, որոնք վը-
ճուեցին պաշտպանել Հեթաթը մինչև վերջին
մարդը: Հեթաթի նահանգապետ Էլ-Բախանը
սատիկ զայրացած է անգլիացիների դէմ:
Նրա իրաւասութեան ներքոյ գտնվում են
9,300 հետեակ զինուորներ և մի գունդ հե-
ծելագոր: Հեթաթում ոչ մի ռուսական զոր-
ծակատար չէ երեցած: «Times» լրագիրը հա-
ղորդում է, որ Հօրնի 4 օրուայ ընթաց-
քում նաւատորմի արեւելք նաւելու վերաբե-
րութեամբ ոչինչ հրաման չը ստացաւ: Լա-
յորը երբեք չէ պահանջել, որ Փոքր Ասիայի
պաշտանների մէջ բացառապէս անգլիացիներ
նշանակվեն:

Կ. ՊՈԼԻՍ, 4/16 նոյեմբերի: Սուլթանը վա-
ւերացրեց Եւրոպական նահանգների այն ծը-
րագիրը, որ Բ. Դուռը ներկայացրեց նրան.
վերանորոգութիւնների իրագործման վրա հսկա-
ութիւն գործելու, համար, կանոնաւոր մասնա-
ժողովներ պէտք է հաստատվեն: Սուլթանը
վաւերացրեց փոքրասիական նահանգների
վերանորոգութիւնների ծրագիրը. համաձայնեց
ձանաչել մինիստրութեան պատասխանատու-
թեան սկզբունքը: Մուսուրուս-փաշան Հե-
ռագրում է Բ. Դրանը, որ լորդ Սէլիսթրի-ի
բաւականացել է տուած բացատրութիւննե-
րով: Մուսուրուսի կարծիքով Սէլիսթրի-ի հա-
մոզվել է, որ Ռուսաստանի և Թիւրքիայի
կարծեցեալ բարեկամութեան լուրը սխալ է:

Խաբազիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

զօաքները: Մի գաղտնի և մանուկի համար անհա-
կանալի դրութիւն քաղում է նրան դէպի քաղաքը.
նա գիտում է այնտեղ իր անորոշ յոյսերով, ինքնա-
վտանգ, և միանգամայն յանձնված իր բախումը:
Տարակից չը կայ, որ այսպիսի անփորձ և անմեղ
բախտախնդրիկները տանք անտէրութիւնից, ո-
մանք խնամակալ չունենալով, ընկնում են քաղաք-
ների մոլորութիւններին մէջ և դառնում են թշուառ
արարածներ, բայց մեծ մասը հանում են իրանց
նպատակին:

Գալով քաղաքը, գիւղացի մանուկը անպատճառ
ունի մի նպատակ: Եթէ ցանկանում է նա վաճա-
ռական դառնալ, մանուկ է մի վաճառականի մօտ
որդէս օգուտի աշակերտը. նա ոչինչ վաք չէ
պահանջում, միայն թէ տալին նրան հաց և հա-
զուտ: Նրանք մինչև տասն տարի անտանիկ նե-
ղութիւնների համբերելով, վերջապէս նա փոքրիկ
զոււմարի տէր է դառնում և սկսում է իր համար
մի առանձին առևտուր անել: Նա բացի սովորե-
լուց առևտրական եղանակները, մի և նոյն ժա-
մանակ ստանում է վաճառքից նրա բարոյակա-
նութեան լաւ կամ վատ յատկութիւնները: Մի և
նոյն կերպով են սկսում իրանց անպարէզը և այն
մանուկները, որոնք ցանկանում են ևս և ինչ աբ-
հետ սովորել. աշակերտութիւնից անհնարին նե-
ղութեան հանում են վարպետութեան: Վաղաք-
ների թէ վաճառականները, թէ արհեստաւորները
մեծ յօժարութեամբ ընդունում են իրանց մօտ
գիւղացի մանուկներին, որովհետև նրանք հաւա-
տարիւն են լինում, չեն գործում, և շուտ սովո-
րելով, օգուտ են տալիս իրանց վարպետներին:
Որդէս հայ աղջիկներից չէ կարելի գտնել աղանի-
ներ, այնպէս էլ հայ մանուկներից չէ կարելի գտ-
նել տան սպասուորներ: Բացառութիւնները խիստ
աննշան են: Եթէ հայ մանուկը մտնում է մէկի
մօտ ծառայելու, անպատճառ նպատակ ունի մի բան
սովորել, որ կազատէր նրան ստոր պարագայում ից:

Ոչ սակաւ հետաքրքրութեան արժանի է, թէ
որպիսի եռանդով, որպիսի անձնատկութեամբ
և առանց բնաւ միջոցների գիւղացի մանուկը
քաղաքում աշխատում է ուսում ստանալ, Գա
մի կատարեալ նահատակութիւն է, որի մասին
կը խօսեմ իր տեղում, երբ կը նկարագրվի առ-
հասարակ մեր ուսանողների դրութիւնը:

Գիւղացի մանուկների սաստիկ հոսանքը դէպի
քաղաքները զրկում է գիւղական ժողովրդին իր
թարմ ուժերից և թուլացնում է նրա անելութիւ-
նը: Մանուկը քաղաքում սովորելով որ և ինչ ար-
հետ, կամ վաճառականութիւն, և կամ ուսում
նական դառնալով, այլ ևս սովորելով քաղաքի
կենտրոն և հեշտութիւններին, այլ և չէ վերադառ-
նում իր հայրենական տունը, որովհետև իր ար-
հետը, իր գիտութիւնը գիւղում գործադրութիւն
չեն գտնում: Նա բնակութիւն է հաստատում
քաղաքում, այնտեղ ամուսնանում է, և այնտեղ
էլ ապրում է մինչև իր կենսի վերջը: Նրանք
միայն գնում է տեսնելու իր ծնողներին և աղջա-
կաններին, և եթէ իր դրութիւնը ներում էր, ծը-
նողներին, քոյրերին, եղբայրներին իր մօտ է բերել
տալիս, և այսպէս գիւղական հասարակութիւնը
զրկվում է մի ծովից: Բայց օրքան այդպիսի
ծովի մարմը են ամեն տարի:

Գիւղական մանկուտ սաստիկ հոսանքը դէպի
քաղաքները, թէև, որդէս յիշեցի, մի կողմից
զրկում է գիւղացուն իր թարմ ուժերից, բայց
միւս կողմից մտցնում է գիւղերի մէջ նոր կենսը,
նոր քաղաքակրթութեամբ տարբ: Քիչ չէ պատահում,
այն երիտասարդները, որոնք քաղաքներում զար-
գացել էին, աչքները բացվել էին, և հասկացել էին
կենսի նպատակը ու պահանջները, կրկին վերա-
դառնում են գիւղը, յորդորում են իրանց հայրե-
նակիցներին կրթութեան գործի մէջ, զարդնր
հիմնել տալով, և նրանց հասարակական կենսի
և անտեսութեան մէջ նոր ձևեր, նոր բարոյութե-

նոր մտցնելով: Օրինակներ շատ են եղել, որ մի
գիւղացի պատանի, մանկութեան հատկութեամբ քա-
ղաքը գնալով, այնտեղ մնալով և հարստանալով,
դարձեալ չէ մոռացել իր ծնված տեղը, և հայրե-
նակական զգացմունքից զրկված, կամ բոլորովին
իր ծախով, կամ օժանդակութիւններ հաւաքելով,
հիմնել է իր հայրենի գիւղում մի դպրոց, և կամ
օգնել է իր հայրենակիցներին այս և այն անտե-
սական գործի մէջ: Այսպիսով գիւղացիները դուրս
են դալիս իրանց անարժանութիւնից և իրանցից
բաժանված ուժերը առաջնորդում են նրանց դէպի
յառաջադիմութիւն:

Գիւղացի մանկութիւնը չափազանց առաձգական և
գիւրթութեւ բնատրուութիւն ունի. նա շատ չէ են-
թարկում իր պայքրից մնացած աւանդական սովո-
րութիւններին ոչ միայն կենսի մէջ, բայց
և պարագայութիւնների մէջ: Նրա մօտ չէ
կարելի տեսնել այն քառապայական ջոկու-
թիւնը, որ պահում է գիւղացուն իր անփոփոխ,
անշարժ և քարացած միակերպութեան մէջ: Բա-
ւական էր մի օրինակ, բաւական էր, որ հանգա-
մանքները նպատակէին նրան, նա արդէն փոխում
է իր կացութեան ձևերը: Այս է պատճառը, որ
մենք չունենք գիւղական ազգայնականութիւն իր
նեղ նշանակութեամբ վեր առած: Տեսնում ես,
նա պարագայում է հողի մշակութեամբ, այդեպա-
նութեամբ, անամապաւնութեամբ և այլն, իսկ մի
մասնում է արքունական կապալներին մէջ, և հենց
որ փողի տէր դարձաւ, էլ չես ճանաչի երեկվայ
կոշտ, գունդի գիւղացուն, նա ոտքից ցզուրկ
փոխվում է և ցոյց է տալիս բոլոր ձևերը փոք-
ր շատ կրթված քաղաքացու: Ես կը բերեմ մի
համեմատութիւն: Վեր առնենք օրինակի համար
ուսում մոտեցնել: Նա օրքան էլ հարստանայ, մինչև
անգամ միլիոնի տէր դառնայ, դարձեալ կը մնայ
նոյն մոտեցիկը, դարձեալ կը տեսնու նրան առա-

գին մարդով, ուղիւ կտրած երկայն մազերով,
կարմիր չիթեղէն շապիկով, մինչև ծնկները վեր
քաշած կոպիտ Կօլիկներով, և Լանքի վրա ձգած
տուրուպով: Եթէ քաղաքում և թէ գիւղում նա
մի և նոյն հագուստն է կրում, մի և նոյն ռամ-
կական լեզուով է խօսում, և մի և նոյն կերպով
թեքվում է, մինչև գետին խոնարհվում է և գլուխ
է տալիս, երբ գործ ունէր մի դեղին կօճակաւոր
մուշկիթի հետ: Հարստութիւնը և միջոցները չեն
փոխում նրան. բնական է սովորական խրճիթի
մէջ, ուսում է իր օրէնքն փայտէ ամանի մէջ,
փայտէ գլուխով, խմում է արաղ և զկովառ, հա-
տացնում է փորը, և օրըստօրէ բլթնում է, մի-
մարանում է: Բայց մեր նորահաս գիւղացին այսպէս
չէ: Նիւթական միջոցների համեմատ նա փոխում
է և ապրուստի ու կացութեան ձևերը: Ես տե-
սել եմ գիւղացի երեսասարդները ցիլիւրով, դու-
նաւոր նուրբ ձեռնացներով, օտարած սպիտակ շա-
պիկներով, հագնված որդէս մի փարիզեան ֆրանտ,
մատին դրած ունի բրկլանտ մատանի, ոսկի ժա-
մացուցով, խօսում է դանազան լեզուներով, լրա-
մանքներ է կարդում, եղել է եւրոպական զանազան
քաղաքներում, դատում է պօլիտիկայի վրա, բնա-
վում է ճաշակով կահաւորած տան մէջ, որի լուսա-
մուտները զարդարած են գոյնգոյն ծաղիկների
թաղարկներով: Ի հարկէ, բացառութիւնը մեծ է,
մասնաւոր այն գիւղերի վերաբերութեամբ, որ
հեռու են քաղաքներից և մեծ ճանապարհներից,
որ ընկած են խուլ անտառների, անմատչելի լեռ-
ների և անյայտ ձորերի մէջ:

(Կը շարունակվի)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Պ. Ներկէ վ. Մեծատունեանցի յօրինած «Ներքաւան արժեքները և աշակերտութեան հայկական ուսումնարանաց» վերնագրով գրքովի 1 հատորն արդէն տպագրված է: Օտարաբար լինողի ցանկացողը կարող են դիմել Թիֆլիսում առ գրադարանային մեծ պ. Գրիգորեանցի, իսկ Ախալցխայում առ հեղինակին պ. Ն. Մեծատունեանցի, և առ պ. պ. Յարուսթիան, Բաղրամաւ և Մկրտիչ Արապաճեանցի. իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլի. փոստայի ծախքը առնողի վրա է:

1—3

ԱՌՆԵՏՐԱՎԱՆ ՏՈՒՆ ՎԵՐԱՆ ԻՎԱՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ԲԱԳՐԱՏԻՈՆ՝ ՄՈՒՆԻՐԱՆՍԿԻ ԵՒ ԸՆԿ.

Իշխան Իվան Կոնստանտինովիչ Բագրատիոն՝ Մոսկուայի յայտնում է, որ իր հիմնած ԱՌՆԵՏՐԱՎԱՆ ՏՈՒՆ բացումն և գործողութիւնն ներքէ կը սկսվեն ներկայ տարվայ նոյեմբերի 1-ից: Առևտրական տան ԳՐԱՍԵՆՆԱԿԸ գրանցված է Թիֆլիսում, Բուսկի բազար հրապարակի վրա ՏՈՒՆ № 10

1—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ հիւրանոցատեղերը, ուսուցիչները խանութատեղերը, խմիչքները կըրպակները ունեցողները և զբանց տեսակ առևտրականները պարտաւոր են ներկայ տարվայ մինչև նոյեմբերի 15-ը վերցնել թողարտող վերականգնող, հակառակ դէպքում բոլոր այդ տեսակ հիմնարկութիւնները կը փակվեն: 2—3

ՍԵՆՆԱԿԻՆ՝ վարձով են տրվում կարասիքներով, բոլոր յարմարութիւններով, ճաշով և առանց ճաշի: Մանաւանդ ՅԱՐՄԱՐ ԵՆ ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար: Սեննակները գտնվում են Նորաշենակայա փողոցի վրա, Պուշկինովի տանը: Գնի մասին նոյն տեղը կարելի տեղեկանալ տանտիրոջից: 1—2

ՉԱՔ. ԳԻՐԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍՏԱՆ ԳՐԱՎԱՆՔԱՌԱՆՑՈՒՄ» տապել է

- 1 Սրբանձառանց-ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ 1 ռ. 25 Կ.
2 Ս. Մանդինեանց-ԿՐՈՆԻ ԶՈՒ
ԳԵՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆ 1 ռ. —
3 Բժիշկ Ա. Բաբայեանց ՈՒՍՈՒՄ՝
ՆԱԿԱՆ ԱՌԳԱՅԱՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 1 ռ. —
4 Ա. Բահայեանց-ԲԵՐԱԿԱՆ
ՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏԱՅԻ ԼԵՋՈՒԻ — 25 Կ.
5 Երկաթէ ԳԻՄՆԱԿՈՎ ՄԱՐԴԸ ԵՒ
ԱՌՆԵՏԻՔ ՊԱՏՐԱՐԻ ՀԱՅՈՑ 1 ռ. —
6 Յ. Շիշմանեան - ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ
ԹԵՆՆՑ ՀԱՌԱՔՈՒՄՆ Ա. 1 ռ. 15 Կ.
7 Փարոս 1879 — — — Թ. 1 ռ. —

Կենտրոնական Գրադարանային Գործողի փողոցի վրայ, Արծրունու Գալերէյում վաճառվում են հետևեալ նոր, գրքերը:

1. Կարմիր լապտեր, փողովի մանկ. նց ընթերցանութեան համար. Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. — ռ. 50 Կ.
2. — նոյնը առանց կազմի. — » 30 Կ.
3. Թաւանաց մեղու՝ փողովի մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած. — » 40 Կ.
4. Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Յ. Մանդինեանի պատկերազարդ. — » 30 Կ.
5. Հակապատանձութիւն. մանկական վէպ, Թարգ. Յ. Մանդինեանի, պատկերազարդ. — » 10 Կ.
6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. — 1 — Կ.
7. Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձառանց — 1 » 25 Կ.
8. Երկունք իններորդ դարու. գործ Մերենցի. — 1 » — Կ.
9. Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրանտ Սաստուրի. — » 60 Կ.
10. Մի կաթիլ արտոյր, գործ. Սիւսիկ Հայ միսիրին վրայ. — » 35 Կ.
11. Սամաւէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Արծրունու. — » 50 Կ.
12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, Բժ. Ա. Բաբայեանի — 1 » — Կ.
13. Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատիներէնից և Ռուսերէնից Հայերէն. Բժ. Լ. Տիգրանեանի — 1 » — Կ.
14. Կրօնք. հոգեբանական հետազոտութիւն Ս. Մանդինեանի — 1 » — Կ.
15. Հայկական թատրոն. Վալքի իմ վէպեր, փարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի — » 40 Կ.
16. Բերքեր բիձու համաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի — » 25 Կ.
17. Աշխատանքի երեկոյ գիւղում, փողովի մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբազեանի — » 25 Կ.
18. Բռնի ամուսնութիւն. կոմիդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Չափեանի — » 40 Կ.
19. Ժանս և Ժանէտ օպերա-փողովի, Թարգ. Գ. Շահբազեանցի մէկ գործողութեամբ — » 40 Կ.
20. Պէպո. կոմիդիա երեք արարուածով, գործ. Գ. Սուսուրեանի — » 30 Կ.
21. Պատանեկան խրատ. փողովի մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի — » 50 Կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր, Հայերէն, Ռուսերէն և, օտար լեզուների, դասական պոետիկական ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն Ռուսերէն և Գաղերէն վկայանքութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և դիտողութեան զանազան ճիւղերին վերաբերող գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արաւթնութեամբ: Օտարաբարացիք իրանց պահանջները պէտքէ ուղարկեն հետևեալ հասցեով. «Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю»

4—6

ՁԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԵԳԻԱՆԵՐ ՄԵՔԵԼԵՆԻ ՁԻԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի ղեղադործ:

ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ

Գիւցի Ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները գրեթէ ինձ պարապել նրանց արդիւնադործութեամբ և որովհետեւ պատիճների պատրաստելը գաղտնիք է և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում բացի մաքուր Ձիւթից, եւ առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖԻՆԵԼԵՆԻԱՆԵՐ (ԳԻԹՅԵՐ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էփան:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը ինչ-լացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետեւ նորա առիթ չունեն ռուսաց փողերով պահպանել ՄԵՔԵԼԵՆԻԱՆԵՐ ՄԵՔԵԼԵՆԻԱՆԵՐԻ ՊԱՏԻՃՆԵՐԻՑ: Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր ղեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում և Ուքեանսկի ղեղատուն Լա. Ի. Գիւրշֆելդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրիսովի և Բառոմովի դէղատուն:

24—25

ՆՕՏԵՐԵՐԻ 7

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Նոյեմբերի 6-ին)		ՀԵՌԱԳԻՐ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒԳԻ		Փ Օ Ս Տ		ԲԺՇԿԱՆՈՑ		ՄՇԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	
Ուսկին (պօռնիկներով)	Բ.	Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.	Բ. Կ.
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1470	—									
Հին 20 Կ. 72 պր. 1000 »	1245	—	1	2	3	4	5	6	7	8	9
Վիդրիչի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—	1	2	3	4	5	6	7	8	9
Երկրորդ 5% վիդրիչի »	230	—	1	2	3	4	5	6	7	8	9
Մարտի կուրսը 270 —	100	—	1	2	3	4	5	6	7	8	9
Լծողանի կուրսը Օղեսայի վրա »	9	55	1	2	3	4	5	6	7	8	9
Վենայի կուրսը արծէ 121 գ.	100	—	1	2	3	4	5	6	7	8	9
Գալերիի կուրսը »	4	85	1	2	3	4	5	6	7	8	9
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—	1	2	3	4	5	6	7	8	9
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—	1	2	3	4	5	6	7	8	9
Շաքարը բրոնզու »	7	40	1	2	3	4	5	6	7	8	9
» միւս տեսակը »	7	15	1	2	3	4	5	6	7	8	9
» շաքար աւաղ »	5	30	1	2	3	4	5	6	7	8	9
» արանգիւր »	5	30	1	2	3	4	5	6	7	8	9
» մաքուր վառած »	10	—	1	2	3	4	5	6	7	8	9
Բաժնակը Երևանու Ա. Երկրիկայի սերմից »	8	—	1	2	3	4	5	6	7	8	9
Միւս տեսակը հին սերմից »	7	40	1	2	3	4	5	6	7	8	9
Բուրդը թույլ »	7	50	1	2	3	4	5	6	7	8	9
» թարաղամի »	4	—	1	2	3	4	5	6	7	8	9
Աւելի բարձր »	2	20	1	2	3	4	5	6	7	8	9
» Երևանի »	—	—	1	2	3	4	5	6	7	8	9
Գարին »	1	40	1	2	3	4	5	6	7	8	9
Մոմը բնածարսի (степ.) »	12	40	1	2	3	4	5	6	7	8	9
Մեծածարս Նուրմայ »	180	—	1	2	3	4	5	6	7	8	9
Կապիթոն »	140	—	1	2	3	4	5	6	7	8	9
Կոկոնը Նուրմայ (ռոմ.) »	50	—	1	2	3	4	5	6	7	8	9
Ֆրիդանը (լաւ) Ագուլայ »	65	—	1	2	3	4	5	6	7	8	9
Կօֆէն մեկի »	26	—	1	2	3	4	5	6	7	8	9
» Լիւանի »	22	—	1	2	3	4	5	6	7	8	9
» Մանիսի »	18	—	1	2	3	4	5	6	7	8	9